

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.172>

## Evidence of Continuous Destruction of Historical Architectural Monuments of Artsakh by the Republic of Azerbaijan

Nune Sarumyan

<https://orcid.org/0009-0000-2269-5382>

YSU Faculty of History, Chair of Armenian History, Lecturer

[nune.sarumyan@ysu.am](mailto:nune.sarumyan@ysu.am)

**Keywords:** Artsakh, expropriation, historical and architectural monuments, church, monastery complex, Armenian historical cemetery, archaeological monument, Yerevan Gate, distortion of facts, appropriation of cultural heritage.

*The article attempts to highlight the policy of distortion and destruction of the historical fate of many Armenian churches, monasteries, libraries, museums and other historical and architectural monuments, pursued by the Armenian-hating authorities of Azerbaijan in the Armenian Artsakh world.*

*It seems that the Azerbaijani authorities not only destroyed traces of Armenian culture, but also tried to whitewash everything that was Armenian.*

*The continuation of expropriation by the Republic of Azerbaijan of historical and architectural monuments of Artsakh is revealed; its main goal is clarified - the elimination of the Armenians of Artsakh.*

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնալուրացման շարունակականության վկայություններից**

**Նունե Սարումյան**

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոնի դասախոս

**Հիմնաբառեր՝** Արցախ, բռնալուրացում, պատմաճարտարապետական հուշարձաններ, եկեղեցի, վանական համալիր, հայկական պատմական գերեզմանատուն, հնագիտական բնակավայր, Երևանյան դարպասներ, խեղաթյուրում, մշակութային ժառանգության յուրացում:

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 172-187



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 10.06.2024

Revised: 16.07.2024

Accepted: 30.08.2024

© The Author(s) 2024

*Հողվածում փորձ է կատարվում լուսարանելու հայկական Արցախի աշխարհում Ադրբեջանի հայաստյաց իշխանությունների կողմից որդեգրած բազմաթիվ հայկական եկեղեցիների, վանքերի, գրադարանների, թանգարանների և պատմաճարտարապետական այլ հուշարձանների պատմական ճակատագրի խեղաթյուրման ու ոչնչացման քաղաքականությունը:*

*Ներկայացվում է, որ ադրբեջանական իշխանությունները ոչ միայն ոչնչացնում էին հայ մշակույթի հետքերը, այլև փորձում էին աղվանականացնել այն ամենը, ինչը հայկական էր:*

*Բացահայտվում է Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնաշարժման գործողությունների շարունակականությունը՝ պարզաբանելով դրա բուն նպատակը, այն է՝ Արցախի հայկականության վերացումը:*

### Свидетельства непрерывности уничтожения исторических архитектурных памятников Арцаха со стороны Азербайджанской Республики

Нуне Сарумян

Исторический факультет ЕГУ, кафедра истории Армении, преподаватель

**Ключевые слова:** Арцах, экспроприация, историко-архитектурные памятники, церковь, монастырский комплекс, Армянское историческое кладбище, археологический памятник, Ереванские ворота, искажение фактов, присвоение культурного наследия.

*В статье предпринята попытка осветить политику искажения и разрушения исторической судьбы многих армянских церквей, монастырей, библиотек, музеев и других историко-архитектурных памятников, проводимых армяноненавистническими властями Азербайджана в армянском Арцахском мире.*

*Представляется, что власти Азербайджана не только уничтожали следы армянской культуры, но и пытались обелить все, что было армянским.*

*Выявляется продолжение экспроприации Азербайджанской Республикой исторических и архитектурных памятников Арцаха, уточняется ее основная цель – ликвидация армянскости Арцаха.*

\* \* \*

**Ներածություն:** Արցախը պատմական Հայաստանի վարչատարածքային միավոր է, նրա անբաժանելի մասը: Այն զբաղեցնում է «Փոքր Կովկասի հարավարևելյան լեռնոտ տարածքը, Մեծ Հայքի ծայր արևելյան հատվածի մի մասը: Նրա սահմաններն արևմուտքում հասնում են Սյունյաց աշխարհին՝ մինչև Սևանա լճի արևելյան ափերը, հյուսիս-արևելքում՝ Ուտիքին, հարավում՝ Երասխ (Արաքս) գետին, արևելքում՝ խորանում Մուխանքի դաշտաբերանին, իսկ հյուսիսային ու արևելյան սահմանագիծը բացահայտ չի երևում, այլ թվում է, թե այն բաժանվում է լեռների ստորոտներով, մասնավորապես Խոչքար լեռներով և Շամքորի անջրպետով, իսկ արևմուտքից եզրագծվում է Սյունյաց Աղավնու (Հագարու) գետով, որոնք պարսպում են նրա ելքը և փոխում ջրերի ընթացքը, որովհետև Սյունիքում գետերը հյուսիսից և ելքի կողմից իջնում են Գեղամա

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնալուրացման շարունակականության վկայություններից**

լեռներով դեպի մեծ Երասխը, իսկ Արցախում արևմուտքից արևելք դեպի Կուր գետն են հոսում՝ ոռոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենահզորը ամենահյուսիսայինն է՝ Թարթառը կամ Թերթերը, ըստ մեր նախնիների՝ Տրտուն, որը, բխելով Վայոց ձոր և Զանգեզուր լեռների թիկունքից, անցնելով Խաչենի խոր ձորերով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը՝ անցնելով Պարտավ քաղաքի մոտով»[ Ալիշան, 1993, 5] :

Արցախի տարածքում պատմության ընթացքում բնիկ ժողովրդի կողմից վեր են խոյացվել բազմաթիվ պատմաճարտարապետական կոթողներ, պատմության վկայարաններ, որոնք ընդգծում են ոչ միայն տարածաշրջանի հայկականությունը, այն կերտողների հայկական ոգին, այլև արտահայտում են ժողովրդի պատմական գոյության ուղին, զարգացման բարձր մակարդակը և հմտությունները: Գոյության ընթացքում հաճախակի ենթարկվելով օտարի կողմից հարձակումների, բռնությունների՝ Արցախը կարողացել է պահպանել իր պատմական դեմքն ու պատմաճարտարապետական կոթողների վեհությունը:

Ադրբեջանի Հանրապետությունը իր ստեղծման իսկ օրվանից՝ 1918 թվականից, որդեգրել է բազմաթիվ հայկական եկեղեցիների, վանքերի, գրադարանների, թանգարանների և պատմաճարտարապետական այլ հուշարձանների պատմական ճակատագրի խեղաթյուրման ու ոչնչացման քաղաքականությունը: Վկայությունը բռնագավթված Նախիջևանում, Արցախ աշխարհում (Հյուսիսային Արցախ, Լեռնային ու Դաշտային Արցախ) ոչնչացված պատմաճարտարապետական հուշարձաններն ու գերեզմանաքարերն են [Կարապետյան, 1999; Հասարթյան, 1992; Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2011թթ., 2011; Մելիք-Շահնագարյան Լ., 1998; Մկրտչյան, 1985; Մկրտչյան, 2003; և այլն]:

Հայկական մշակութային արժեքների կանխամտածված և հետևողական ոչնչացումն Ադրբեջանի կողմից լիովին համապատասխանում է «Էթնոցիդ» կամ ցեղասպանություն բնորոշմանը [Պարսամյան, «Կաճառ», 4(47-58), 2010, 160-161]:

Նման քաղաքականությունը լայն թափով ծավալվում էր հատկապես խորհրդային ժամանակաշրջանում: Այսպես, բերենք մի քանի փաստեր. ոչ լրիվ տվյալներով ԼՂԻՄ-ի՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակ պատմաճարտարապետական հուշարձանների թիվը կազմում էր 1700, որոնց մեծ մասը եկեղեցիներ և վանական համալիրներ էին: Սակայն դրանք ոչ միայն չէին մտել պետության վերահսկողության տակ գտնվող հուշարձանների ցուցակի մեջ, այլև Ադրբեջանի ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հատուկ հանձնաժողովի կողմից գրանցվեցին որպես «անցյալի վտանգավոր կրոնական կենտրոններ»: Անտեսվեցին այդ հուշարձանների վրա կատարված հայկական արձանագրությունները» [HKP, Путь к вершинам, 2001, 75]:

1960-ական թթ. ավարտին ու 1970-ական թթ. Ադրբեջանի ղեկավարության և անձամբ Հ. Ալիևի հրահանգով (ի դեպ, 10.05.23-ին նրա 100-ամյակն էր նշվում Շուշիում) Շուշիում ոչնչացվեցին հայկական հուշարձանները: Ավերվեց հին գերեզմանատունը, որի տեղում՝ շիրմաքարերի ու խաչքարերի հարևանությամբ, անտառ տնկեցին [Բալայան, 1989, 590]: Իսկ Արցախյան շարժման ընթացքում վերջին հայերն էլ բռնագաղթեցին հայկական հինավուրց

Շուշիից, և այն ամբողջությամբ ադրբեջանականացվեց (մինչև Շուշիի ազատագրումը՝ 1992 թ. մայիսի 9-ը...):

Ադրբեջանական քարոզչությունը մշտապես փորձել և փորձում էր բավականին ցինիկ ու անխնա կերպով ջարդել ու վերացնել այն ամենը, ինչը հայկական էր: Ադրբեջանցու համար միշտ էլ գոյություն է ունեցել մեկ հայի կերպար, այն է՝ թշնամի: Եվ դա հաստատել ու հաստատում է հենց նույն ինքը՝ ադրբեջանցին:

Բաքվի իշխանությունները ոչ միայն ոչնչացնում էին հայ մշակույթի հետքերը, այլև հասարակությունից թաքցնում էին այն ամենը, ինչը տակավին ավերված չէր: «Ադրբեջանական ԽՍՀ զբոսաշրջիկության սխեմայի» «Լեռնային Ղարաբաղ» բաժնում զետեղված 14 հուշարձաններից միայն մեկն է հայկական: Մխեմայում չէին ներկայացված հայկական ճարտարապետության բազմաթիվ նմուշներ, այդ թվում՝ Ամարասը (V դ.), Դադիվանքը (V դ.), «Օխտը դռնին» (IV-VI դդ.), Գտչավանքը, Խաթրավանքը, Գանձասարը (XIII դ.) և այլն, չնայած որ դեռևս 1914 թ. Ղարաբաղում հաշվվում էր 222 գործող եկեղեցի [Туристическая схема Азербайджанской ССР, 1970], որոնք խորհրդային տարիներին դադարեցին գործել:

Դեռևս 1968 թ. ապրիլի 2-ի Ադրբեջանի մինիստրների (նախարարների) խորհրդի թիվ 140, ինչպես նաև 1988 թ. ապրիլի 27-ի թիվ 145 որոշումներում [Постановления Совета Министров Азербайджанской ССР N 140 от 2 апреля 1968 г. и N 145 от 27 апреля 1988 г.] հաստատվեցին պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկերը: Ադրբեջանի ամբողջ տարածքում աղվանական-ադրբեջանական հայտարարվեցին Արցախի, Նախիջևանի, Ուտիքի և այլ տարածքներում գտնվող ամեն մի տեսակ հուշարձանները՝ իսպառ մերժելով նրանցից որևէ մեկի կամ այլ առնչությունը հայ ժողովրդի հետ:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ Ադրբեջանի ազգայնամոլ ու հայատյաց դեկավարությունը մշտապես խտրական քաղաքականություն է վարել ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև հանրապետության մի շարք շրջաններում՝ Շահումյան, Խանլար, Շամքոր, Քարհատ և այլն:

Գետաբեկի, Դաշքեսանի, Շամխորի, Խանլարի և Շահումյանի շրջաններում (Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սահմաններից դուրս) ոչնչացվել, քանդվել և որպես շինություն օգտագործվել են շուրջ 18 եկեղեցիներ, վանքեր, խաչքարեր: Գետաբեկի շրջանում 1983 թ. ամբողջությամբ քանդվել է Խունիսավանք եկեղեցու (IX դ.) գմբեթը: Նույն թվականին անհետացել է ստելլաքրիստոնեական խորհրդանիշներ պարունակող հարուստ զարդանախշերով, բազմաթիվ հայերեն արձանագրություններով (VI դ.) խաչքարը, Ղալաքենդ գյուղում եկեղեցին (IX-XI դդ.) վերածվել է արտաքնոցի [Մելիք-Շահնազարյան Լ., 1998, 144-145]: Դաշքեսանի շրջանում Բանանց գյուղից 8 կմ հարավ գտնվող եկեղեցին (IX-XI դդ.) 1987 թ. բուլդոզերով քանդվել ու կիրճ է նետվել, «երկաթգծի շինարարության համար», պայթեցվել-քանդվել է Խաչքուլաղ գյուղի եկեղեցին և գերեզմանատունը (XVII-XVIII դդ.), Էլեկտրագծերի սյուներ տեղադրելու պատրվակով քանդվել է Կիրանց եկեղեցին (XII դ.): Նույն թվականին Ամրվար գյուղի գերեզմանատան բոլոր շիրմաքարերը՝ խաչքարերն ու տապանաքարերը (XIII-XV դդ.), բուլդոզերով գետն են նետվել:

Շամխորի շրջանի Գյուլամբար գյուղում 1937թ. ավերվել է Դասնո Կարմիրեղցի վանքը (VII դ.), 1982 թ. ավերվել է Բարսում գյուղի վանքը (X դ.), 1986 թ. մասամբ ավերվել է Գառնակեր գյուղի

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների քոնայությունների շարունակականության վկայություններից**

մոտ գտնվող Հրեշտակապետաց եկեղեցին (1816 թ.), քանդվել ու որպես շինություն է օգտագործվել Պատիշեն (Բադաքենդ) գյուղի եկեղեցին (XIX դ.):

Խանլարի շրջանում քանդվել է 3 եկեղեցի [Մելիք-Շահնագարյան, 1998,145]: Գետաշենի մոտ մասամբ քանդվել է «Մրցունիս» եկեղեցին (XVII), 60-ական թթ. հիմնովին քանդվել են Մուռուտ գյուղի մոտ գտնվող եկեղեցին և գերեզմանատունը (XIII դ.), իսկ Գետաշեն գյուղի մոտ գտնվող Եղնասար վանքի (XVII) հուշարձանի պատկերը դիտավորյալ վնասել են:

«Շահումյանի շրջանում ամբողջությամբ քանդվել է Խարխափուտ գյուղի մոտ գտնվող Մանդուր եկեղեցին, և ոչնչացվել է գերեզմանատունը (1252 թ.): Ռուս Բորիս գյուղի շրջակայքում հիմնովին քանդվել է եկեղեցին (XII-XIII դդ.), նաև Վերինշեն գյուղի եկեղեցին (XVII դ.), որը «խանգարել է երկաթուղու անցկացմանը» [Մելիք-Շահնագարյան, 1998,145-146]:

Այդպիսով՝ բարբարոսաբար ոչնչացվել են Գետաբեկի շրջանի 3, Դաշքեսանի շրջանի 5, Շամխորի շրջանի 4, Խանլարի շրջանի 3, Շահումյանի շրջանի 3 հայկական պատմական հուշարձաններ:

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ երբ 1975 թ. հայ կինոգործիչների մի խումբ փաստագրական կինոնկարի համար նկարահանումներ էր անում Նախիջևանում, տեղի կոմկուսի քարտուղար Ղազիբեկովը նրանց հետ հանդիպման ժամանակ հայտարարեց. «Ձեր ինչի՞ն է պետք հայ մշակույթի հուշարձաններ նկարելը, երբ մեզ մոտ արդեն համարյա հայ չկա, և շուտով հայկական եկեղեցիների ու վանքերի մնացորդներից ոչինչ չի մնալու» [Письмо группы кинематографистов Л. Брежневу, 1975 г. “Pro Armenia”, М., N1, 1991]:

Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում գտնվելու ընթացքում և վերջին պատերազմի ժամանակ «ավերվել, պայթեցվել ու ամբողջությամբ ոչնչացվել են 167 եկեղեցի, 8 վանական համալիր, 123 հայկական պատմական գերեզմանատուն և 47 հնագիտական բնակավայր: Ջարդվել ու շինանյութի են վերածվել 2500 բարձրարվեստ խաչքար ու վիմագիր արձանագրությամբ 10000 շիրմաքար: Բուլդոզերներով երկրի երեսից սրբվել-տարվել է 13 պատմահնագիտական հուշարձան: Պայթեցվել են Ցախաչի, Մեծ Թաղլարի ու Ագոխի քարայրների հուշարձանները: Ավերվել են Մոխրաբլուր, Սարուշեն, Ակնաբերդ, Մանաձոր բնակավայրերի խաչքարերը, շիրմաքարերը, եկեղեցիները և բերդապարիսպները (V-XIII դդ.): Ավերվել է Մայրաբերդի եզակի բերդապարսպի մեծ մասը (XVI-XVII)» [Մելիք-Շահնագարյան, 1998, 148-149]:

Ադրբեջանական իշխանությունները երկրի երեսից վերացրին Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող հնադարյան Ծար քաղաքի ավերակները, որը միջնադարում եղել է Հայաստանի վարչական, առևտրական ու մշակութային խոշոր կենտրոն: Ծարը նշանավոր էր իր բերդապարիսպներով, պալատներով, վանքերով և երեք հոյակապ եկեղեցիներով:

Բունիաթովներն ու նրանց աշակերտները հաջորդաբար պաշտոնական քարոզչության միջոցով թե՛ ադրբեջանցիների, թե՛ հայերի գիտակցության մեջ փորձում էին սերմանել այն գաղափարը, թե «իբր հայերը աղվանների հետնորդներն են»: «Ներկայիս սերունդն արդեն հաստատապես համոզված է և այդպես էլ համարում է, որ Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասն է, որ խաչքարը խաչդաշ է, հայերը եկվորներ են, անկոչ հյուրեր» [Բալայան Չ., 1989, 590]:

Ադրբեջանցիների աղվանական ծագման մասին ոչ գիտական կեղծ գաղափարը պաշտոնական դոկտրինա էր դառնում: Այն արժանացավ նաև մոսկովյան իշխանությունների հավանությանը, որովհետև թուրքական գործոնի վտանգավորությունը գիտակցելով և ձգտելով Ադրբեջանն իրենց տեսադաշտում պահել՝ մոսկովյան իշխանություններին ձեռնտու էր թուրքական արմատներից նման հրաժարումն ու նրա փոխարինումը առասպելական աղվանական արմատներով: Ղարաբաղահայության համար այդ տեսությունն ունեցավ ռասիստական ծայրահեղ գործնական հետևանքներ. նախ ղարաբաղցիները աղվանաադրբեջանցիներ են, որոնք եկվոր հայերի ազդեցության հետևանքով մոռացել են իրենց լեզուն ու մշակույթը, ուստի և անհրաժեշտ է օգնել նրանց վերադառնել իրենց հայրենի էթնիկական բնակավայրը:

Աղվանական «տեսությունը», մի կողմից, հիմնավորում էր «եկվոր հայկական տարրի» արտահոսքը, մյուս կողմից՝ հետամնացների էթնիկ միաձուլում, մայրենի լեզվի և մշակույթի արգելում, իբրև «մոռացված» արժեքների վերագրումն իրենց, իսկ Ղարաբաղի հայտարարումը՝ որպես աղվանա-ադրբեջանական էթնոսի կորցրած բնօրրան, 1990-1991 թթ. էթնիկ մաքրման հիմնավորում էր [Золыа, 2001, 43]:

Պատմության այս ձևախեղումը հետապնդում էր բացահայտ քաղաքական նպատակ:

Հայկական էթնոսի աղվանա-ադրբեջանական ծագումը, եկվոր լինելու հանգամանքն իրենց խորքում ունեին քաղաքական նախահիմք, որը որոշում էր Ղարաբաղի հետագա ճակատագիրը: Դա անմիջականորեն ուղղված էր էթնիկ հայկական ինքնության վերացմանը:

Փաստորեն՝ պատմությունը հանդիսացավ քաղաքական ծրագիր:

Արցախ-Ղարաբաղի հայաթափման քաղաքականությունը շարունակվեց և նոր դեմք ստացավ: Ինչպես Արցախյան պատերազմների ընթացքում, այնպես էլ հետպատերազմյան շրջանում չեն դադարել հայոց հոգևոր և մշակութային ժառանգության հանդեպ Ադրբեջանի կողմից ոսնձգություններն ու բարբարոսական գործողությունները:

1991-1994 թթ. Արցախյան պատերազմի ժամանակ Ադրբեջանը ամբողջությամբ օկուպացրել էր Շահումյանի շրջանը ու Մարտունու և Մարտակերտի շրջանների արևելյան հատվածները: Հարակից տարածքները, ԼՂ ինքնապաշտպանական ուժերի վերահսկողության տակ լինելով, ադրբեջանական կողմին զրկեցին հայկական բնակավայրերի հետագա ռմբակոծումից: ԼՂՀ-ի դեմ ադրբեջանական ահաբեկչական ազրեսիայի տարիներին ժամանակավոր օկուպացված Շուշի քաղաքում գտնվող Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին վեր էր ածվել «Գրադ» հրթիռային համակարգերի ռազմական զինամթերքի պահեստի: Շուշիից հրետանային կրակահերթերով ավերվում էր Ստեփանակերտ քաղաքը: 1992 թ. մայիսի 9-ի հաղթանակով ադրբեջանական բարբարոսների ձեռքից ազատվեց պղծված Ս. Ղազանչեցոց եկեղեցին, այդ պատմական հուշարձանը, որը ենթարկվել էր անասելի անարգանքի, անմարդկային վերաբերմունքի: Սակայն 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Շուշին կրկին բռնազավթվեց: Ներկայումս այն գործող եկեղեցուց վեր է ածվել մահմեդական մզկիթի [Сарумян, 2023, 92 ] (տե՛ս Նկար 1):

**Պատմություն/ History**

Evidence of Continuous Destruction of Historical Architectural Monuments of Artsakh by the Republic of Azerbaijan

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնալուրացման շարունակականության վկայություններից**



Նկար 1.

Նկարում 1-ի 1-ին շարքում՝ աջից եկեղեցին XIX դարում, ձախից՝ 1992 թ., 2-րդ շարքում՝ աջից Շուշիի ազատագրումից հետո վերականգնված եկեղեցին, ձախից՝ եկեղեցին այսօր, որտեղ ադրբեջանցիները հայկական եկեղեցին վերափոխում են մզկիթի:

Արցախի բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական Խորհրդի [Ազատ Արցախ, 31.05.2022]<sup>1</sup> հաղորդմամբ դեռևս 2020 թ. պատերազմի հետևանքով Արցախի բռնազավթված տարածքներում՝ Շուշիում ու Հադրութի շրջաններում Ադրբեջանի վերահսկողության տակ են մնացել 10 թանգարան՝ 17070 ցուցանմուշներով, և արվեստի գործերի 8 հավաքածու՝ 1077 ցուցանմուշներով [Ադրբեջանի վերահսկողության տակ է անցել Արցախի 8 թանգարան]:



Նկար 2.

Հայկական դրամի Շուշիի մասնավոր թանգարանը

Արցախյան վերջին պատերազմից հետո հայկական տարածքների բռնազավթման արդյունքում Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել 161 վանքեր և եկեղեցիներ, 591 խաչքարեր, Տիգրանակերտը, Ազոխի քարանձավը, Նոր Կարմիրավանը, Կերենի հնությունները, բազմաթիվ ամրոցներ և հոգևոր կենտրոններ: Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել

<sup>1</sup> Արցախում 2022 թ. մայիսի 30-ին՝ ԱՀ նախագահի հրամանագրով ձևավորվել է բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության 15 անդամներից կազմված պետական խորհուրդը:

Արցախի 8 պետական թանգարաններ՝ 19 հազար 311 բացառիկ նմուշներով, ինչպես նաև՝ գորգերի և հայկական դրամի Շուշիի մասնավոր թանգարանները (Տես՝ նկար 2):

Պատերազմի օրերին և դրանից հետո Ադրբեջանական պետական վանդալները պղծեցին եկեղեցիները, գերեզմաններն ու խաչքարերը, շարունակեցին «աղվանականացնել» հայկական մշակութային և հոգևոր ժառանգությունը:

Այսպես, 2022թ. հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության հարցերով գրասենյակը հայտարարություն էր տարածել, ըստ որի «ԱՄՆ Քոննելի համալսարանի Caucasus Heritage Watch կառույցի կողմից հրապարակված արբանյակային տեսագրությունների հետազոտության արդյունքում պարզվել է, որ Ադրբեջանը հիմնահատակ ավիրել է Հադրութի շրջանի Մոխրենիս գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին (18-19 դդ.)» [armenpress.am] : (Տես նկար 3):



Նկար 3.

Փաստորեն՝ Ադրբեջանի կողմից շարունակվում էր իրականացվել մշակութային եղեռնը, կոնկրետ նպատակադրմամբ, այն է՝ զրկել Արցախ աշխարհը իր պատմական ինքնությունից, հայկականության որևէ վկայությունից:

Արդի ժամանակաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական խմորումներն ու տարածքային կորուստները ծանր փորձություններ էին Արցախի ու արցախցիների համար: Իրականությունը կտրուկ փոփոխվեց և փաստվեց մի իրողություն, երբ պատմաճարտարապետական հուշարձանները յուրացնելը դարձավ քաղաքականություն:

Այսօր, «Խաղաղության դարաշրջան» անվան տակ Ադրբեջանի իշխանությունները փորձում են հայաթափված ու բռնազավթված (1988 թվականին հայաթափվեց ու բռնազավթվեց Նախիջևանը, 1992 թվականից նույն ճակատագրին արժանացավ Հյուսիսային Արցախի մաս կազմող ԼՂՀ Շահումյանի վարչական շրջանը, 2023 թվականից՝ Արցախի հիմնական մասը կազմող՝ Լեռնային ու Դաշտային Ղարաբաղը) պատմական հայկական Արցախի հայկականությունը ժխտել և ներկայացնել որպես աղվանական և ուղիական պատմաճարտարապետական հուշարձանների տարածաշրջան:

2023 թ. սեպտեմբերի 19-21 ռազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ նաև Գանձասարի վանքը:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնայտ քանդման շարունակականության վկայություններից**

Գանձասարի վանական համալիրի եկեղեցին, գավիթը, վանքապատկան շինությունները, որոնք բավականին տուժել էին Արցախյան առաջին պատերազմի ժամանակ Ադրբեջանի կողմից իրականացվող հրթիռակոծությունից, վերանորոգվել էին 1993-1997 թթ., այնուհետև վանքի աշխատանքները շարունակվել էին 2000-ական թթ. հայտնի բարերար Լևոն Հայրապետյանի միջոցներով: Վերանորոգման արդյունքում հիմնական հուշարձանախումբը որևէ փոփոխություն չէր կրել, չէր խաթարվել հիմնական պատմական կառույցների տեսքը [Գանձասարի վանքի անկախության տարիներին, 04.11.2023: Միակ բացառությունը եղել է պարապապատերի սալապատումը, ինչը ժամանակին կասեցվել է Արցախի իշխանությունների համապատասխան մարմինների կողմից:

2023 թ. սեպտեմբերի 19-20-ը Ադրբեջանի կողմից իրականացված զինված լայնածավալ ագրեսիայի արդյունքում Արցախի Հանրապետության մի շարք հուշարձաններ հայտնվեցին վտանգի գոտում և ոչնչացման ուղիղ սպառնալիքի տակ:

Ժառանգության հանդեպ անհանդուրժող վերաբերմունքի հերթական դրսևորումը գրանցվեց սեպտեմբերի 27-ին, երբ ադրբեջանցի զինվորականները Մարտակերտ-Քարվաճառ մայրուղուց ուղիղ նշանառությամբ կրակ բացեցին Չարեքտար վանքի ուղղությամբ [ Չարեքտար վանքը. հնագիտական հետազոտություն, 27.09.2023; Մարգարյան Գ., Այվազյան Ս., 2011, 113-133:] (տե՛ս Նկար 4):



Նկար 4.

Նկ. 4. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը և գոմի վերածված եկեղեցու ներքնատեսքը ադրբեջանական օգտագործման ժամանակ (լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի): (Կիրակոսյան Լ., էջ 8)



Նկար 5.

Նկ. 5. Չարեքտարի վանքի սյունասարահի հարավային պատը, լուսանկարը՝ Ս.Այվազյանի:


Չարեքտարի վանքը Թարթառի վերնահովտի նշանավոր հոգևոր կենտրոններից մեկն էր: Հիմնական կառույցները վերաբերում են XXII դարերին, պահպանվել են նաև բազմաթիվ խաչքարեր և արձանագրություններ [Սարգսյան Գ., Այվազյան Ս., 2011, 113-133; Սարգսյան Գ., Այվազյան Ս., Վարձք, թիվ 4, մայիս-հոկտեմբեր, 2011, 48-58]:

Խորհրդային շրջանում Չարեքտար գյուղը հայաթափվել էր և բնակեցվել ադրբեջանցիներով, որի հետևանքով գյուղի տարածքում գտնվող վանքը ծանր կորուստներ էր կրել: Այս շրջանում այն ավերվել է և ձևափոխվել: Կառույցները վերածվել էին անասնագուների: Խաչքարերի մեծ մասը ջարդոտվել էր (տե՛ս Նկար 5):, տապանաքարերը տեղահան էին արվել կամ օգտագործվել որպես շինաքար տնտեսական այլ նշանակության շինությունների կառուցման համար [Կարապետյան, 2002, 10-13]:

Իսկ արդեն 2023 թ. հոկտեմբերի 3-ին՝ Արցախի Հանրապետության նկատմամբ էթնիկ գտման քաղաքականության իրականացումից հետո, Ադրբեջանի մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության վարչությունը հայտարարություն տարածեց, որ հայկական կողմն «օկուպացիայի ժամանակ» իբր վանդալիզմի է ենթարկել Գանձասարի վանքը՝ «անօրինական» վերականգնողական-վերանորոգման աշխատանքներ կատարելով, ինչը, ըստ ադրբեջանական կողմի, հակասում է միջազգային իրավունքների նորմերին ու սկզբունքներին [Армения провела незаконные ремонтно-восстановительные работы в монастыре Гянджасар, 13.11.2023]:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 4-ին, ադրբեջանական կողմը պատմության կեղծարար Բիզվան Հուսեյնովի կողմից տարածեց հաջորդ հայտարարությունը, ըստ որի՝ Գանձասարի վանքի և մասնավորապես Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և գավթի արձանագրություններն իբր կեղծվել, վերափոխվել են հայերի կողմից, ինչն իբր երևում է արձանագրությունների հին ու նոր լուսանկարները (տե՛ս Նկար 6) համեմատելիս [Баку имеет доказательства фальсификации эпиграфики Гандзасарского монастыря, 5.11.2023 ]:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնալուրացման շարունակականության վկայություններից**



Նկար 6.

Ադրբեջանական կեղծարար-պատմաբան Ր. Հուսեյնովը փորձում է առաջ տանել այն միտքը, որ իբր հայկական կողմը խորշում է արձանագրության մեջ կիրառված որոշ եզրույթներ, ստեղանուններ ու հատկապես անուններ մեջբերել և անգամ հիշատակում է Հովսեփ Օրբելուն [Օրբելի И., 2016,38], որի՝ Գանձասարին նվիրված գրքում այդ եզրույթները առկա են, իսկ հայկական կողմն խուսափում է դրանցից և անգամ վախենում է Հովսեփ Օրբելուն մեջբերել [О причинах исчезновения книги Иосифа Орбели:11.11. 2023]:

Դեռևս 2016 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ., վիմագրագետ Հայկ Հակոբյանը ռուսերենով վերահրատարակեց Հովսեփ Օրբելու գիրքը Գանձասարի ու Հավապտուկ վանքի վիմագրերի մասին՝ գրքում տալով նաև Օրբելու աշխատության լուսանկարները էջ առ էջ [ Օրբելի И., 2016,38-40], որոնցում նման մեջբերումներ չկան:

Ըստ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդի տեղեկացման՝ Ստեփանակերտի մայր եկեղեցու գմբեթներից այսօր արդեն հանվել են իսաչերը [Գերեզմանատների ավերումն արբանյակային մոնիտորինգի միջոցով ձեռք բերված տվյալների արդյունքում փաստել է Կովկասի Ժառանգության մշտադիտարկման միջազգային կենտրոնը: 15.11.2023]:

Դարերի պատմություն ունեցող հայկական պատմամշակութային հուշարձանները՝ ազգային այդ արժեքները, ադրբեջանական բարբարոսների ձեռքով շարունակում են պղծվել, զանգվածաբար ոչնչացվել, ավերածությունների ենթարկվել ու անհետանալ:

Ի՞նչ բացատրություն կտա Բիզանտի Հուսեյնովը իր ազգակիցների կողմից կարճ ժամանակ առաջ գործադրված վանդալիզմին՝ Շուշիի երկու հայկական գերեզմանատների ավերմանը:

Ըստ «Կովկասյան ժառանգության պաշտպանություն» (Caucasus Heritage Watch) միջազգային կազմակերպության տեղեկության 2023 թ. «հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանցիները (*իրենց բնորոշ տարբերակով* – ընդգծումն հեղինակի կողմից) բուլդոզերներով ճանապարհ են հարթել Շուշիի՝ Երևանյան դարպասների մոտի գերեզմանոց կոչվող պատմական գերեզմանատան միջով»[ Ադրբեջանցիները ճանապարհ են կառուցում Շուշիի պատմական գերեզմանատան միջով:5.11.2023] (տե՛ս Նկար 7):



Նկար 7.

Շուշիում ոչնչացվել է երկու պատմական գերեզմանոց [Պատմական գերեզմանատների ոչնչացումը բռնազավթված տարածքներում Ադրբեջանի քաղաքականության հստակ ուղղություն է: 06.12.2023]: Ստորև ներկայացվում է Շուշիի հայկական գերեզմանատան նկարը (տե՛ս Նկար 8), ապա՝ նրա նկատմամբ գործադրված բռնության հետևանքների պատկերը:



Арутюнян 2008, Шуши: Нововыявленные исторические надписи

Նկար 8.

Նկ. 8. Խիտ անտառը ծածկում է գերեզմանոցը, որտեղ կա 1802-1913 թվականներով թվագրված առնվազն 78 տապանաքար՝ հայերեն տապանագրերով [Հարությունյան, 2008, 9]:

Հատկանշական է, որ քաղաքն ունեցել է 6 հայկական գերեզմանատուն, որոնցից պահպանվել են հյուսիսային, Երևանյան դռների հարավարևմտյան մասերի ու քաղաքի հարավային մասում (Ժամհարյանների հայտնի տնից վերև) գտնվող գերեզմանատները: Ընդ որում՝ վերջինից բացի՝ մյուսները միտումնավոր պատվել են ակացիաներով, փշոտ թփերով և մացառներով՝ վերածվելով շամբուտների, որպեսզի անձանոթ մարդը պատկերացում չունենա այդ մասին, և հայկական գերեզմանատները հավերժ գոցված մնան գալիք սերունդների, հնագետների ու պատմաբանների համար: Իսկ պատմական վկայագրություններից դժվար չէ ենթադրել, թե ինչպիսի դառն ճակատագիր է ունեցել քաղաքի իսկական տերը՝ Շուշիում ապրող հայը, որը շարունակ փորձությունների էր ենթարկվում՝ դարավոր թշնամու կողմից հայտնվելով բնաջնջման հորձանուտում [Ավերվում են մոռացությունից փրկված վերջին նշխարները: 13.11.2023]:

«Կովկասի ժառանգության պաշտպանություն» (Caucasus Heritage Watch) նախաձեռնության կողմից հրապարակված արբանյակային լուսանկարներից ակներև է բռնազավթված Շուշի

**Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների բռնալուրացման շարունակականության վկայություններից**

քաղաքում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով վնասվել են Շուշի քաղաքի Մեդրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու մնացորդները: Համաձայն 2023 թվականի նոյեմբերի 3-ին արված արբանյակային լուսանկարի՝ ադրբեջանական կողմը շրջակա տարածքների շինարարության ամբողջ շինադրը ծանր տեխնիկայի միջոցով լցրել է եկեղեցու՝ դեռևս 2017 թվականի պեղումներով բացված հիմնապատերի ու ծավալների վրա [Ադրբեջանն աղբակույտի է վերածել Շուշիի 19-րդ դարի Մեդրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմական շերտերը: 04.11.2023]:

Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդի վերը նշված տեղեկության հաստատումն է Կովկասյան ժառանգության պաշտպանության «Caucasus Heritage Watch» միջազգային կազմակերպության վկայությունը ևս, ըստ որի՝ նոյեմբերի կեսերին Ադրբեջանի հրոսակները հանել են Ստեփանակերտի Սուրբ Աստվածածնի մայր տաճարի գմբեթների խաչերը [Ադրբեջանը շարունակում է արգելափակել ԼՂ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելություն ուղարկելու հարցը: 07.11.2023]:

Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած հայկական բոլոր հուշարձանները, եկեղեցիները, վանքերն ու մշակութային այլ արժեքներ այսօր ուղիղ վտանգի տակ են: Այդ իսկ պատճառով հաշվի առնելով բռնազավթված տարածքներում մշակութային ցեղասպանության պետական քաղաքականության իրականացումն Ադրբեջանի կողմից, ինչպես նաև փաստերի քողարկման, խեղաթյուրման ու մշակութային ժառանգության յուրացման հետևողական գործունեությունը, նպատակ ունենալով օգտագործել պետական, փորձագիտական ու հանրային բոլոր կարողունակ շրջանակների ներուժը՝ անհրաժեշտ է, որ հայ հասարակությունը պահանջատեր լինի հայկական մշակույթի պահպանման հարցում և համապատասխան ջանքեր գործադրի խնդիրը բարձրացնելու միջազգային դատարանի առաջ: Ավելին, այդ քաղաքականության դեմ պետք է համարժեք քաղաքականություն տարվի:

**Եզրակացություններ:** Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ բռնազավթված Արցախում ադրբեջանական իշխանությունների վարած մշակութային եղեռնագործ քաղաքականությունը հիմնականում տարվում էր և այսօր շարունակում է տարվել մի քանի ուղղվածություններով.

- նախ՝ պատմամշակութային ժառանգության մասին պաշտոնական հրատարակություններում և տեղեկատվություններում լռության պահպանում,
- ապա՝ էթնոմշակութային և կրոնական պատկանելության խեղաթյուրում,
- երրորդ՝ պատմամշակութային ժառանգության կանխամտածված, թիրախավորված ավերում և այլափոխում,
- չորրորդ՝ պատմամշակութային ժառանգություն հանդիսացող հուշարձանների նկատմամբ բարբարոս գործողությունների իրականացում,
- հինգերորդ՝ հայկական եկեղեցիների վերափոխում մահմեդական ու ուղիական կառույցների,
- վեցերորդ՝ հայկական հուշարձանների հողով քողարկում, պատմական ճշմարտության խեղաթյուրում,
- յոթերորդ՝ պատմամշակութային արժեքների վերացում, եղեռն, բռնալուրացում,

- ի վերջո, մասնագիտական ու ֆինանսական ռեսուրսներ ներառող, միջազգայնորեն իրականացվող քաղաքականություն:

Ակնհայտ է նաև, որ նման գործողությունների վերջնականատակը բնակավայրերը հայաթափելն ու դատարկելն է իր բնիկ ժողովրդից, հայկական հետքի վերացումը, ինչն Ադրբեջանի կողմից շարունակվող հայատյացության ու էթնիկ աստվածության քաղաքականության դրսևորում է, և ինչը հաջողվեց Ադրբեջանին:

#### Նկարների ցանկ

1. Նկ.1. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին. 1-ին շարքում աջից՝ եկեղեցին XIX դարում, ձախից՝ 1992 թ., 2-րդ շարքում՝ աջից Շուշիի ազատագրումից հետո վերականգնված եկեղեցին, ձախից՝ եկեղեցին այսօր, որտեղ ադրբեջանցիները հայկական եկեղեցին վերափոխում են մզկիթի:
2. Նկ.2. Հայկական դրամի Շուշիի մասնավոր թանգարանը
3. Նկ.3. Հաղորդի շրջանի Մոխրենիս գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին
4. Նկ.4. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը և գոմի վերածված եկեղեցու ներքնատեսքը ադրբեջանական օգտագործման ժամանակ
5. Նկ.5. Չարեքտարի վանքի սյունասրահի հարավային պատը
6. Նկ.6. Գանձասարի վանքի և մասնավորապես Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցու և գավթի արձանագրությունների հին ու նոր լուսանկարները
7. Նկ.7. Շուշիի՝ Երևանյան դարպասների մոտի գերեզմանոց կոչվող պատմական գերեզմանատունը
8. Նկ.8. Խիտ անտառը ծածկում է գերեզմանոցը, որտեղ կա 1802-1913 թվականներին թվագրված առնվազն 78 տապանաքար՝ հայերեն տապանագրերով:

#### Գրականության ցանկ

Ադրբեջանն աղբակույտի է վերածել Շուշիի 19-րդ դարի Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմական շերտերը: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://monumentwatch.org/hy/?s=42C>: Վերցված է՝ 04.11.2023:

Ադրբեջանը շարունակում է արգելափակել ԼՂ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելություն ուղարկելու հարցը: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.aravot.am/2023/11/28/1385376/>: Վերցված է՝ 07.11.2023:

Ադրբեջանը հիմնահատակ ավերել է Հաղորդի շրջանի Մոխրենիս գյուղի Սբ Սարգիս եկեղեցին. Մայր Աթոռի հայտարարությունը, <https://armenpress.am/arm/news/1094800.html/>: Վերցված է՝ 07.11.2023:

Ադրբեջանի վերահսկողության տակ է անցել Արցախի 8 թանգարան: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://radiohay.am/2023/11/13/artsakh-museum/> 13.11.2023

Ադրբեջանցիները ճանապարհ են կառուցում Շուշիի պատմական գերեզմանատան միջով: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.aravot.am/2023/11/22/1384226/>: Վերցված է՝ 5.11.2023:

«Ազատ Արցախ», շաբաթաթերթ, Ստեփանակերտ, 31 մայիսի 2022:

**Ալիշան Ղ., Արցախ, 1993**, Երևան, 124 էջ:

**Այվազյան Ս., Սարգսյան Գ., 2011**, Չարեքտարի վանական համալիրի պեղումների և հետազոտությունների արդյունքները, Վարձք, թիվ 4, Երևան, մայիս-հոկտեմբեր, էջ 48-58:

Ավերվում են մոռացությունից փրկված վերջին նշխարները: Սեպտեմբերի 11, 2021 [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://hhpress.am/taratsashrjan/2021/5532/> :Վերցված է՝ 13.11.2023:

Արցախում ձևավորվել է բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդը [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://civic.am/society/culture/33566-mshakutayin-jarangutyun.html> 07.11.2023

**Բալայան Զ., 1989**, Ճանապարհ, «Խորհրդային գրող» հրատ., Երևան, 605 էջ :

Գանձասարի վանքն անկախության տարիներին [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://monumentwatch.org/hy/monument/> : Վերցված է՝ 04.11.2023

Գերեզմանատների ավերումն արբանյակային մոնիտորինգի միջոցով ձեռք բերված տվյալների արդյունքում փաստել է Կովկասի ժառանգության մշտադիտարկման միջազգային կենտրոնը: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://zham.am/?p=162447&l=am>. Վերցված է՝ 15.11.2023:

**Կարապետյան Ս., 2002**, Հայկական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում, «Վասն հայության», շաբաթաթերթ, 23 ապրիլ, էջ 10-13:

**Կարապետյան Ս., 1999**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, ՀՀԳԱ «Գիտություն» հրատ., 247 էջ:

**Հասարթյան Մ., 1992**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Հայաստանի ԳԱ, Երևան, 118 էջ:

Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2011 թթ., ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչություն, Ստեփանակերտ, 2011, 143 էջ:

**Հարությունյան Հ., 2008**, Շուշի: Նորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին, «Դիզակ պլյուս» հրատ., 178 էջ :

**Մելիք-Շահնազարյան Լ., 1998**, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 208 էջ:

**Մկրտչյան Շ., 2003**, Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ» հրատ., 250 էջ:

**Մկրտչյան Շ., 1985**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ., 356 էջ:

Շուշիի գեղարվեստի գործերի կորուսյալ հավաքածուները / «Ազատ Արցախ» շաբաթաթերթ, նոյեմբեր 10, 2022, Ստեփանակերտ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.artsakhtert.com/arm/index.php/culture-and-education/item/36126-2022-11-10-08-10-28>:

Չարեքտար վանքը. հնագիտական հետազոտություն [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://monumentwatch.org/hy> 27.09.2023

Պատմական գերեզմանատների ոչնչացումը բռնազավթված տարածքներում Ադրբեջանի քաղաքականության հստակ ուղղություն է: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://zham.am/?p=163029&l=am>, վերցված է՝ 06.12.2023:

**Պարսամյան Ս., 2010**, Ադրբեջանի կողմից իրագործված հայկական հուշարձանների ոչնչացումը՝ որպես մշակութային ցեղասպանություն, Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական ձգտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, «Կաճառ», 4(47-58), «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, Շուշի, էջ 160-169:

**Սարգսյան Գ., Այվազյան Ս., 2011**, Չարեքտար գյուղի վանական համալիրի պեղումների և հետազոտությունների հիմնական արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, էջ 113-133:

Армения провела незаконные ремонтно-восстановительные работы в монастыре Гянджасар [Электронный ресурс] URL: [https://t.me/KarabakhRu/38176?fbclid=IwAR3MAIywSg19bW-SNSYIYMoBv\\_unrQyyI1c7S4epkiegqPKLrnMxoN8w2\\_NU](https://t.me/KarabakhRu/38176?fbclid=IwAR3MAIywSg19bW-SNSYIYMoBv_unrQyyI1c7S4epkiegqPKLrnMxoN8w2_NU): Վերցված է՝ 13.11.2023:

Азербайджан – враг цивилизации, 2021, №1(1), Ереван, изд. «Лимуш», 2021, 60с..

Баку имеет доказательства фальсификации эпиграфики Гандзасарского монастыря [Электронный ресурс] URL: [https://t.me/RH\\_inside/6749?fbclid=IwAR14Qned0HFZmkdT6fNtY2F3HN1fc66V\\_0FMXFDXPxOKj\\_ud8pLwpiDqLSA](https://t.me/RH_inside/6749?fbclid=IwAR14Qned0HFZmkdT6fNtY2F3HN1fc66V_0FMXFDXPxOKj_ud8pLwpiDqLSA) : Վերցված է՝ 5.11.2023:

**Золян С., 2001**, Нагорный Карабах: проблема и конфликт, изд. «Лингва», Ереван, 307 с.

НКР, Путь к вершинам, /под ред. Н.Р.Мелкумян, Степанакерт, изд:МИД НКР, 2001, 172 с.

Письмо группы кинематографистов Л. Брежневу, 1975 г. “Pro Armenia”, М., N1, 1991.

Постановления Совета Министров Азербайджанской ССР N 140 от 2 апреля 1968 г. и N 145 от 27 апреля 1988 г.

**Сарумян Н.П., 2023**, Проявления политики армянофобии и этнической ненависти в Арцахе со стороны Азербайджанской Республики / Проблемы стран постсоветского пространства, центрального и юго-восточной Европы, Сборник научных статей, Выпуск 7, Воронеж, Издательский дом ВГУ, 174 с..

Туристическая схема Азербайджанской ССР, Москва, 1970.

О причинах исчезновения книги Иосифа Орбели: [Электронный ресурс] URL: [https://karabakhchurch.com/?fbclid=IwAR3laW3EocSF4pVCtZZroNlcDDuJm5OwAsq04CхрpmnjQ5A\\_NWvZXheUB5Bg](https://karabakhchurch.com/?fbclid=IwAR3laW3EocSF4pVCtZZroNlcDDuJm5OwAsq04CхрpmnjQ5A_NWvZXheUB5Bg) Վերցված է՝ 11.11. 2023:

**Орбели И., 2016**, Надписи Гандзасара и Авоцпука, собрал и подготовил к печати А. Акопян, изд. Института археологии НАН РА, Ереван, 279 с..

Monuments and newly discovered inscriptions of Surb Stepanos Monastery of Vachar, <https://monumentwatch.org/hy/monument/>.